

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Հայաստանի Հանրապետությունում 2011թ. անցկացվելիք մարդահամարի նախապատրաստման և անցկացման համապետական հանձնաժողովի նիստի

21.12.2010 թ.

Ժամը 11⁰⁰

1. ՀՀ 2010 թ. փորձնական մարդահամարի նախապատրաստման և անցկացման ընթացքում առաջացած մեթոդաբանական և կազմակերպական հիմնախնդիրները (ամփոփված մինչ 2010թ. դեկտեմբերի 20-ը) և դրանց լուծմանը նպաստող առաջարկություններ:

/ **Ջեկուցող**՝ ՀՀ 2011թ. մարդահամարի նախապատրաստման և անցկացման համապետական հանձնաժողովի քարտուղար,
ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ՝ **Կ. Կույումջյան** /

2. Այլ հարցեր:

Հայաստանի Հանրապետությունում 2011թ. մարդահամարի նախապատրաստման և անցկացման համապետական հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 21-ի նիստի

Մասնակցում էին՝ հանձնաժողովի 29 անդամներից 18-ը:

Բացակայում էին՝ ՀՀ ԱԺ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ (հանձնաժողովի նախագահի տեղակալ)՝ Հ.Հակոբյանը, ՀՀ ԱԺ պատգամավոր Ս. Ավետիսյանը, ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ՝ Գ.Ազարյանը, ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի անդամ՝ Ա.Սարիբեկյանը, ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ՝ Տ. Սահակյանը, ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տնօրենի առաջին տեղակալ՝ Ռ. Հարությունյանը, ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալության պետ՝ Գ. Եգանյանը, ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի տեղակալ՝ Ա. Պողոսյանը, ՀՀ կառավարության աշխատակազմի տարածքային զարգացման և բնապահպանական վարչության պետ՝ Կ. Մարգարյանը, ՀՀ ԳԱԱ-ի տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն՝ Վ. Հարությունյանը, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ռեկտոր՝ Յու. Սուվարյանը:

Հրավիրված էին՝ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի ներկայացուցչի տեղակալ Գ.Հայրապետյանը, Համաշխարհային բանկի Երևանյան գրասենյակի ներկայացուցիչ, մարդահամարի հարցերը համակարգող Ա. Հովհաննիսյանը, ՀՀ ԱՎԾ մարդահամարի վարչությունից Վ. Գևորգյանը և Գ. Նշանյանը:

Օրակարգում ներառված էին հետևյալ հարցերը.

1. ՀՀ 2010 թվականի փորձնական մարդահամարի նախապատրաստման և անցկացման ընթացքում առաջացած մեթոդաբանական և կազմակերպական հիմնախնդիրները (ամփոփված մինչ 2010թ. դեկտեմբերի 20-ը) և դրանց լուծմանը նպաստող առաջարկությունները:
2. Այլ հարցեր:

Բացման խոսքով հանդես եկավ նիստը նախագահող՝ ՀՀ 2011թ. մարդահամարի նախապատրաստման և անցկացման համապետական հանձնաժողովի նախագահ, ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար՝ **պրն. Ա.Գևորգյանը**: Նա ողջունեց հանձնաժողովի անդամներին և առաջարկեց աշխատանքային քննարկումները կազմակերպել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (ՀՀ ԱՎԾ) կողմից նախապես ներկայացված օրակարգի հաջորդականությամբ: Օրակարգում ընդգրկված հարցը ներկայացնելու համար նա խոսքը տվեց հանձնաժողովի նախագահի տեղակալ, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախագահ՝ պարոն Ս.Մնացականյանին:

Ս.Մնացականյանը - Շնորհակալություն հայտնեց հանձնաժողովի նախագահին և անդամներին մասնակցության և հարցը կարևորելու համար: Նախ տեղեկացրեց, որ ՀՀ 2010թ. փորձնական մարդահամարի նախապատրաստման և անցկացման ընթացքը կներկայացվի 20.12.2010թ. դրությամբ, քանզի փորձնական մարդահամարի արդյունքում հավաքագրված վիճակագրական տեղեկատվությունը ներկայումս գտնվում է հետագա

վիճակագրական մշակման գործընթացում (տվյալների թվային ծածկագրում և համակարգիչներ մուտքագրում) և այդ փուլի արդյունքներով՝ հիմնախնդիրների առաջացման պարագայում, դրանք ևս կներկայացվեն հանձնաժողովին: ՀՀ 2010թ. փորձնական մարդահամարի նախապատրաստման և անցկացման ընթացքում առաջացած մեթոդաբանական և կազմակերպական հիմնախնդիրները և դրանց լուծմանը նպաստող առաջարկությունները ներկայացնելու համար Ս.Մնացականյանն առաջարկեց խոսքը տալ ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ, հանձնաժողովի քարտուղար՝ Կարինե Կոյունջյանին:

Կ.Կոյունջյանը - համաձայն օրակարգի ներկայացրեց ՀՀ 2010թ. փորձնական մարդահամարի ընթացքում առաջացած հիմնախնդիրները, ինչպես **նաև պարզաբանեց** զեկույցում նշված հիմնախնդիրների լուծումներին նպաստող **առաջարկությունները** և ակնկալվող աջակցությունն ըստ ուղղությունների (զեկույցի տեքստը և համակարգչային ներկայացմամբ համառոտագիրը՝ 13 պատկեր կցվում են):

Ա.Գևորգյանը - նիստը նախագահողը՝ ներկայացված հիմնախնդիրների լուծումներին նպաստող առաջարկությունների կապակցությամբ հարցեր ուղղեց համապատասխան ոլորտների ներկայացուցիչներին, որոնց առընչվում էին հիմնախնդիրների լուծումները: Մասնավորապես, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությանն առնչվող խնդրո առարկա հարցը վերաբերում էր փորձնական մարդահամարի ընթացքում բնակչության հաշվեգրման ժամանակ առաջացած հաշվեգրման ենթակա անձանց հասցեների, ինչպես նաև անձանց՝ տվյալ համայնքում հաշվառված լինելու հանգամանքին:

Հ.Հունանյանը - ՀՀ փոխօստիկանապետը հավաստեց, որ ՀՀ 2011թ. մարդահամարի նախապատրաստման և անցկացման շրջանակում ՀՀ ոստիկանության անձնագրային բազայով՝ համայնքներին կարող են տեղեկատվություն տրամադրել միայն համայնքներում հաշվառված բնակչության մասով (ըստ գրանցումների), բայց ոչ փաստացի բնակչության վերաբերյալ:

Ա.Գևորգյանը - նշեց, որ հաջորդ հիմնախնդիրն առնչվում էր հասցեային տնտեսության իրավիճակին, ինչի կապակցությամբ ՀՀ կառավարությանն առընթեր կադաստրի պետական կոմիտեի ներկայացուցչին առաջարկվեց կատարված աշխատանքների ընթացքի մասին տեղեկատվություն ներկայացնել:

Ա.Մուսայանը - ՀՀ կառավարությանն առընթեր կադաստրի պետական կոմիտեի նախագահի տեղակալը հաստատեց, որ հասցեային տնտեսությունների հետ կապված տեղեկատվությունը թերի է, և կան որոշ համայնքներ որտեղ հասցեների ճշգրտման աշխատանքները դեռևս կատարված չեն, քանի որ այդ համայնքների ղեկավարները չեն դիմել գործընթացը սկսելու համար:

Ն.Մուրադխանյանը - ՀՀ ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչության պետը՝ հավելեց, որ կան համայնքներ, որոնք ընդհանրապես հասցեավորված չեն, որոշ համայնքներ էլ կրկնակի են հասցեավորված: Այս հիմնախնդրի լուծմանը նպաստող ՀՀ ԱՎԾ առաջարկությունն այն էր, որ համայնքների ղեկավարների կողմից պատրաստվի և ՀՀ ԱՎԾ տրամադրվի համապատասխան տեղեկանք՝ վերջին երկու տարիների ընթացքում տեղի ունեցած փոփոխությունների մասին, ինչը չափազանց կարևոր է:

Ա. Գևորգյանը - հիշեցրեց, որ դեռևս որոշ ժամանակ առաջ ՀՀ կառավարությանն առընթեր կադաստրի պետական կոմիտեն հանձնարարական էր տրվել աշխատել չհասցեավորված համայնքների հետ՝ համայնքի հասցեային տնտեսության կարգավորման համար և հանձնարարվեց խստագույնս հետևողական լինել հանձնարարականները պատշաճ մակարդակով կատարելու հարցում:

Վերոնշյալով պայմանավորված՝ պարոն Ա.Գևորգյանը **հանձնարարեց** ՀՀ կառավարությանն առընթեր կադաստրի պետական կոմիտեին, մեկշաբաթյա ժամկետում ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ներկայացնել բոլոր այն համայնքների ցանկը, որտեղ համայնքի հասցեականության բացակայության կամ կրկնակի առկայության

հիմնախնդիրներ կան: Կարևորեց նաև հետևողականությունը ոչ միայն քարտեզների տրամադրման հարցում, այլ նաև հասցեային տնտեսության կարգավորման հարցում:

Հ.Հունանյանը - Հասցեային տնտեսության կարգավորման հարցի կապակցությամբ ավելացրեց, որ տեղական ինքնակառավարման մարմիններում առկա է ՀՀ ոստիկանության հասցեների ամբողջական ցանկը, որն ըստ անհրաժեշտության կտրամադրվի ՀՀ ԱՎԾ մարզային ստորաբաժանումներին՝ ՀՀ 2011թ. մարդահամարի նախապատրաստման ու կազմակերպման աշխատանքներին աջակցելու համար:

Ա.Գևորգյանը - նշեց, որ 2011 թվականի հունվարին տեղի է ունենալու ՀՀ մարզպետների հերթական հավաքը, որի ժամանակ **հանձնարարվում է՝**

1. Ներկայացնել նրանց ՀՀ 2010թ. փորձական մարդահամարի վերոնշյալ արդյունքներն ու հիմնախնդիրները, որպեսզի ծավալվեն քննարկումներ և կատարվեն նշված հիմնախնդիրների լուծմանը նպաստող առաջարկություններ, առ այն, որ մինչև ՀՀ 2011թ. բուն մարդահամարի անցկացումը՝ համապատասխան միջոցներ ձեռնարկվեն հիմնախնդիրներին լուծումներ տալու համար:

2. ՀՀ 2011թ. մարդահամարին ընդառաջ՝ քննարկված հարցերի ներառմամբ, պատրաստել մարզպետներին ուղղված հանձնարարականների նախագծերի ցանկ:

Ա.Գևորգյանը – անդրադարձավ փորձական մարդահամարի ընթացքում մեթոդաբանական լուծում պահանջող հիմնախնդիրներին.

1) Հարցաթերթի՝ «տնային տնտեսությունների գյուղատնտեսությամբ զբաղվելուն» վերաբերող բաժնում տնային տնտեսություններին սեփականության իրավունքով պատկանող հողաչափերի մասին ոչ լիարժեք տեղեկատվության տրամադրմանը, որը խնդիր առաջացրեց փորձնական մարդահամարի ընթացքում: Պրն.Ա. Գևորգյանը հանգամանորեն պարզաբանեց հիմնախնդիրը, թե մեթոդաբանական և թե ֆորմալ առումով, ընդգծելով, որ այս պարագայում լուծումներ պետք է ներկայացնեն համայնքի ղեկավարները, քանի որ եթե քաղաքացին հրաժարվում է հողի սեփականատերը համարվելու փաստից, ապա հարցի կարգավորումը դառնում է համայնքի խնդիրը:

2) Բարձրագույն կրթություն ունեցող և ըստ մասնագիտության աշխատելու հնարավորություն չունեցող գյուղաբնակ անձանց զբաղվածությանը վերաբերող հարցի լրացմանն առ այն, որ գոյամիջոցն ապահովելու համար իրականացված գյուղատնտեսական աշխատանքները նրանք չեն համարում զբաղվածություն, այն դեպքում, երբ ՄԱԿ-ի մեթոդաբանությամբ այդպիսի անձինք համարվում են զբաղվածներ: Պրն.Ա. Գևորգյանը հավաստեց, որ որքան էլ գյուղաբնակների կողմից նման ձևով գյուղատնտեսական աշխատանքներով զբաղվելը չեն համարում զբաղվածություն, այնուամենայնիվ ՀՀ ԱՎԾ պետք է հետևի միջազգային մեթոդաբանությանը:

Ա.Մնացականյանը - Ա. Գևորգյանի առաջարկությամբ ներկայացրեց ՀՀ 2011թ. մարդահամարի նախապատրաստման, կազմակերպման և անցկացման համար նախատեսված ու առկա ֆինանսական միջոցների իրավիճակը, շեշտելով պակասուրդի չափը: Նա ներկայացրեց նաև ս. թ. նոյեմբերի 22-ին Համաշխարհային բանկի Երևանյան գրասենյակում կայացած դոնոր երկրների և կազմակերպությունների կոորդինացիոն հավաքի մասին, նշելով, որ Համաշխարհային բանկի կողմից՝ Բանկի Երևանյան գրասենյակի համար առանձնացվել է հատուկ հաստիք՝ ՀՀ 2011թ. մարդահամարի ֆինանսական ռեսուրսների կառավարման գործընթացները համակարգելու նկատառումով:

Ա. Գևորգյանը – հարցրեց, թե ինչ ակնկալիքներ կան միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից՝ ՀՀ 2011 թ. մարդահամարին տրամադրվող ֆինանսական օժանդակության չափը մեծացնելու հարցում:

Ա.Հովհաննիսյանը - ՀԲ Երևանյան գրասենյակի մարդահամարի հարցերը համակարգողը, ներկայացրեց ՀԲ կողմից մարդահամարի նպատակով դոնորների աջակցության

գումարների կառավարման «Տրաստ Ֆոնդ» հիմնելու հնարավորության ուղղությամբ կատարվող աշխատանքները, ինչը կդյուրացնի այդ գումարների կառավարումը:

Գ. Հայրապետյանը - ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի ներկայացուցչի տեղակալը, ներկայացրեց մի շարք դոնորների արտահայտած մտահոգությունը՝ ՀԲ նախաձեռնությամբ ս.թ. նոյեմբերի 22-ին կայացած Դոնորների հանդիպման ընթացքում, առ այն, որ ցանկանալի կլիներ տեսնել ՀՀ կառավարության լրացուցիչ ներդրումը ՀՀ 2011թ. մարդահամարի գործառույթներին՝ հասցնելով այն 21 տոկոսից 25 տոկոսի, ինչը վստահություն կներշնչի դոնորներին և նոր թափ կհաղորդի ՀՀ 2011թ. մարդահամարի ֆինանսավորմանն աջակցելու նրանց մտադրություններին:

Ա. Գևորգյանը – նշեց, որ ՀՀ կառավարությունը շահագրգռված է մարդահամարի անցկացման համար, սակայն տրամադրվող ֆինանսական միջոցների ավելացում այս պահին հնարավոր չէ, քանի որ 2011թ. բյուջեն արդեն իսկ հաստատվել է: Սակայն, 2011 թվականի առաջին եռամսյակում բյուջեի կատարողականը քննարկելուց հետո միգուցե հնարավորություն ստեղծվի վերանայելու նշված հարցը:

Նիստի եզրափակման խոսքով հանդես եկավ

Ա. Գևորգյանը – առաջարկեց ՀՀ 2011 թ. մարդահամարի նախապատրաստման և անցկացման համապետական հանձնաժողովի հերթական նիստն անցկացնել 2011թ. փետրվարին: Հանձնարարեց.

- պատրաստել ՀՀ 2011թ. մարդահամարի նախապատրաստման, կազմակերպման և անցկացմանն օժանդակելու նպատակով պետական մարմիններին և տեղական ինքնակառավարման մարմիններին տրվելիք առանձին հանձնարարականների նախագծերի ցանկ,
- մշակել և ներկայացնել ՀՀ 2011թ. մարդահամարի, նախապատրաստման, կազմակերպման, անցկացման և նյութերի մեքենայական մշակման ու արդյունքների հրապարակման աշխատանքների մանրամասն ժամանակացույց:

Հանձնաժողովի նախագահ՝

ՀՀ փոխվարչապետ,

ՀՀ տարածքային կառավարման նախարար

Ա. Գևորգյան

Հանձնաժողովի քարտուղար՝

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության

աշխատակազմի մարդահամարի և

ժողովրդագրության բաժնի պետ

Կ. Կույումջյան